ՍԱԼՂԱՆԻ ԵՐԳԵՐ

Նոր Նախիջևանի և նրա գյուղերի բնակիչներից շատերը զբաղվում էին ոչխարաբուծությամբ։ Խաշնարածությունը շատ ընդունված էր նրանց պատմության դեռ Ղրիմի շրջանում։ Գաղթելով Դոնի ափերը, նրանք Ղրիմից բերին մեծ քանակով դմակավոր սև ոչխարներ, որոնց սերունդը մինչև այժմ էլ կա։

Ոչխարաբույծների մի մասը կազմում էին «քեսեքչիները» կամ «օթառչիկները»։ Սրանք զբաղված էին միմիայն ճարպի համար ոչխարներ գիրացնելու գործով։ Նրանք իրենք ոչխարներ չէին աճեցնում, այլև ձմեռվա ընթացքում ոչխարաբույծներից գնում էին տարիքավոր ամուլ մնացած ոչխարներ, նրանցից կազմում «քեսեքներ», որոնց մեջ լինում էին շուրջ հազար գլուխ ոչխար։ Այդ «քեսեքները» ամբողջ գարնանը, ամռանը և աշնանը արածեցնում էին ամենալավ արոտատեղերում, գիրացնում այնքան, որ աշնանը մինչև մի փութ ճարպ էին ստանում ամեն մի ոչխարից։ Ոչխարները մորթում էին «սալղաններում», այսինքն՝ ճարպահալ գործարաններում։ Ճարպը հալեցնում էին գործարանների հսկա կաթսաներում, լցնում տակառների մեջ և արտահանում Եվրոպա։ Ոչխարների բուրդը և մորթիները գնում էին Եվրոպայի վաճառականները։ Ճարպազուրկ միսը ծախում էին էժան գնով ժողովրդին, որ պատրաստում էին նրանցից ապուխտ, «էրեշկիկ», «բալիկ», լեզուները չորացնում և պահում «մաոինատի» մեջ։ Շատ օտարազգի վաճառականներ այդ ճարպազուրկ միսը աղում էին և մեծ քանակությամբ տանում Պոլիս և Եվրոպա։

Նախիջևանում եղել են շուրջ քսան «սալղաններ», որոնց վերջերս ռուսաց ազդեցության տակ անվանում էին «սալնիկներ»։ Այդ «սալղաններում» ամեն տարի մորթում էին մի քանի հարյուր հազար ոչխար։ «Սալղաններ» գործը քաղաքի և ամբողջ հարավային Ռուսաստանի տնտեսության մեջ բռնում էր մեծ տեղ։ «Սալղաններ» ուրիշ քաղաքներում չկային, հայերը այդ զբաղմունքը բերել էին Ղրիմից։ Ամբողջ Հյուսիսային Կովկասը և Հարավային Ռուսաստանը ճարպի համար գիրացրած իրենց ոչխարները քշում էին Նոր Նախիջևան և մորթում էին նրա «սալղաններում»։ Այդ գործը հայ վաճառականները տարան և Ստավրոպոլ, Պյատիգորսկ և ոչխարներով հարուստ ուրիշ վայրեր։

«Սալղանները» բացվում էին և սկսում գործել հոկտեմբերի մեկից, նրանց բացումը կատարվում էր մեծ հանդեսով, ճաշկերույթով, քաղաքագլխի և այլ պաշտոնական անձանց մասնակցությամբ, «տաուլ-զուռնայի» քեֆով։

«Օթառչիկները» առհասարակ ունևոր մարդիկ էին, գործը շատ ձեռնտու էր, դրա համար էլ եթե մեկը լավ էր ապրում, ասում էին. «օթառչիկ է, օթառչիկի պես կապրի»։

Այս գործին նվիրված երգեր շատ և շատ են եղել, բայց այժմ գիտցողներ չկան։ Մեզ հասել են հետևյալ հատվածները։

ՍԱԼՆԻԿԻ ԵՐԳ

Էգավ սալնիկ,
Եղ-միս իլինք.
Աբուխտ, էրեշկիկ,
Լեզու ու բալիկ,
Աղբարին օշթան,
Սուֆային քոշան,
Ջուվան-չուվան,
Գախաճ գըչորնան,
Ցորեգը սուֆան,
Գիշերը թավան,
Բոլգեգ չաման,
Համան գըչորնան։

Բաշլայից սալղան.
Ջամանով խրյման,
Հերիսան, դոլման,
Բումբար ու շրոդան,
Սամսա-խաթլաման.
Ջրոչրո սամսան,
Փուռի թել սամսան,
Եղոդ չրուլաման,
Խորիզով գաթան

Շուդ էլլան մեյդան։
Ամենը համան
Հարսնիքի գաթան,

Ուշգեդ կիզին
Գաբռել-Միքայելին
Բեթեր կըբաթի
Միսով կուբաթի։